ՀՀԱՐՄԱՎԻՐԻՄԱՐԶԻ
ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հասցե. Արմավիրի մարզ
Լուսագյուղ համայնք

«01» հոկտեմբեր - 2016թ. ՈՐՈՇՈՒՄ — N 12-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ և ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի բնակիչ՝ Մանվել Երվանդի Ենգիբարյանը (ծնված 06.11.1955թ) դիմել է Արմավիրի մարզի, Լուսագյուղ համայնքի Սայաթ-Նովա 4 հասցեում գտնվող իրեն պատկանող (ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 15.03.1991 թիվ 2 որոշման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի տրված 10.06.2016թ. ս/մ 3092,3093) 0.17 հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.0118հա ավել օգտագործվող հողամասի, օրինական հողամասի և ավել օգտագործվող հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և շենք շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ.,հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, <<տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀօրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>>ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1328-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի Սայաթ-Նովա 4 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի՝ Մանվել Երվանդի Ենգիբարյանի (ծնված 06.11.1955թ), գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.17հա հողամասին կից ավել օգտագործվող 0.0118հա հողամասի, ընդհանուր հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների (բնակելի տուն՝ 205.3քմ. կառուցված 1966-1970թթ., մառան՝ 10.2կառուցված 1970թ., ծածկ՝ 28.1քմ. կառուցված 1970թ., թոնրատուն՝ 16.9 կառուցված 1970թ.,անասնաշենք՝ 35.6 կառուցված 1970թ.,ծածկ՝ 10.6թ. կառուցված 1970թ.) նկատմամբ:

Բնակելի տունը բավարարում է <<ՀՀ համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելիտների կարգավիճակի մասին>>ՀՀօրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսնված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀԿԱԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Մանվել Երվանդի Ենգիբարյանի (ծնված 06.11.1955թ), սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և հողամասում առկա բնակելի տան նկատմամբ տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Բնակելի տանը տրամադրել Սայաթ-Նովա 4 հասցեն:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հուլիսի - 2016 թ. թիվ 13-Ա

ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի առաջին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2016 թվականի սեպտեմբերի 18-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել՝

1/ մշակույթի տուն, Խանջյան փողոց թիվ 3
/տեղամասային կենտրոնը և հասցեն/

գրադարանավար՝ Արմեն Հրանտի Առաքելյան:
/տարածքի տիրապետող՝ պաշտոնը, անուն, ազգանուն, հայրանուն/

2. Սույն որոշման օրինակն ուղարկել լիազոր մարմին, թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տարածքի տիրապետողին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ ---------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թվականի հուլիսի «27»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 10⁰⁰

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 29» հուլիսի - 2016 թ. թիվ 14-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 29-ի «Համայնքի մահացած բնակիչների ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու մասին» 5-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի բնակիչ՝ Արամ Գրիգորյանին մոր մահվան կապակցությամբ հատկացնել դրամական օգնություն՝ 40000 /քառասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝----------- Ս.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թվականի հուլիսի «29»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11 ^{00}

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«01 » հուլիսի- 2016թ. թիվ 11- Ա

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 22.12.15թ թիվ 197 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2016թ հիմնական միջոցառումների պլանի 9.1.2 կետի.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի համայնքապետարանում 2016 թվականի հուլիսի 20-ին անցկացվեիք <<ՈՒժեղ երկրաշարժի առաջացման դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը >> թեմայով շտաբային ուսումնավարժությունը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով.

1. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալ նշանակել ՔՊ շտաբի պետին:
2. ՈՒսումնավարժությունում ներգրավել՝
- համայնքի ղեկավար կազմին,
- համայնքի ԱԻ հանձնաժողովին,
- համայնքի տարահանման հանձնաժողովին,
- համայնքի կազմավորումների հրամանատարներին.
3. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալին.
- Համագործակցել Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի կազմման հարցերում:
- Մինչև 2016 թվականի հունիսի 11-ը մշակել և իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը:
- Ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2016 թվականի հուլիսի 20-ը ներկայացնել հաստատման:
- Կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավված ուժերի նախապատրաստումը համաձայն հաստատված օրացուցային պլանի:
- Ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 2016 թվականի հուլիսի 19-ը:
4. Սույն կարգադրությունը հայտարարել ըստ առնչության:

5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքապետ, ուսումնավարժության ղեկավար՝ _____ Ս.Կարապետյան